(անտէր) տէրութեան պէտք է հանի։ Այս առարկութեամբ կառավարութիւնը գրաւել էր Սսի վանքին պատկանող թլանի կալուածքը, որ գրուած էր Սսի հանգուցեալ Մկրտիչ կաթուղիկոսի անունով. սակայն եթէ նախկին բռնապետութեան օրով հնար եղաւ յետ ստանալ այդ կալուածքը, այժմ, սահմանադրական կառավարութեան ժամանակ պէտք է անյոյս չլինել։ Պատրիարքարանը գրով և բանիւ դիմումներ արել է ում անկէ։

Ս. Պատրիարքը յայտնել է, որ եթէ ազգը բարոյական անուններով տակ անձեր է ներկայացնում, կառավարութիւն է պարտաւորեցնում այդպէս վարուելու։ Սեպհականութեան մի ուրիշ ապահով եղանակ թող ցոյց տրուի, բայց մինչև այդ՝ ազգը պէտք է իւր իրաւունքին տէր լինի ինչպէս ուրիշ ազգերն են։ «Վարչութիւնը ամեն ազգաւ միջոց պէտք է գործադրի այս սկզբունքի խնդիրը փրկելու համար», ասում է Բիւզանդիոնը։

Երուսաղէմի պատր. տեղապահը հաղորդել է որ «Վուսաւորեայի» հանդէսը առանց որ և է միջնադէպի է անցել։

Ծ. Դանիէլ Ծ. վարդապետը կամեցել է հրաժարուել Երուսաղէմի պատ. տեղապահութիւնից իբրև Ադրիանոպոլի եպիսկոպոս ձեռնադրուելու համար. բայց Վեհ. Հայրապետը յայտնել է, որ նա եպիսկոպոս ձեռնադրուելով պէտք է վարի Երուս. պատր. տեղապահի պաշտօնը։

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Սուլթանը հաստատել է նորընտիր Պօղոս եպիսկոպոս Թերզեանին հայ կաթոլիկների պատրիարք կաթուղիկոս։

Լրագրները հաղորդում են, որ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան վանքում տեղի պէտք է ունենայ նորահաստատ աբբա Գովրիկեանի եպիսկոպոսական ձեռնադրութիւնը. որ արդէն պէտք է կրի արքեպիսկոպոս տիտղոսը իբրև հանգ. Արսէն արքեպիսկոպոս Ադնեանի յաջորդ։

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻ

ՊՐԱՒՈՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻ

(Церк. Вѣст.)

Սրբ. Սինոդը որոշել է 1911 թ. նախահաշուի մէջ առանձին գումար մտցնել եկեղ.—ծխ. դպրոցներում գիւղատնտեսական պարապմունք մտցնելու համար։

Ծխական քահանաները շատ անգամ պատճառելով եկամուտների սակաւութիւնը բնակարանի հին և ցուրտ լինելը, ընտանիքի բազմանդամութիւնը, տեղափոխուել են ուզում։

Симб. Епарх. Вѣд. ասում է, որ այդ միայն պատրուակ է. իսկական պատճառն այն է, որ քահանաները չեն կարողանում յարմարուել ծխականների հետ։ Այնտեղ, ուր քահանաները կարողանում են մօտենալ, յարմարուել ծխականներին, իրանց տեղերում հաստատ մնում են, որովհետև ծխականները իրանց հոգևոր տուրքերը սիրով են տալիս և քահանաները լիութեան և առատութեան մէջ են ապրում. ուր սիրում են քահանային, ներում են նրա մի քանի պակասութիւններն էլ, եթէ ունի։

Քահանան շատ միջոցներ ունի իւր հօտի հետ մօտ յարաբերութիւն ունենալու։ Առաջինը՝ ժողովրդի առօրեայ կեանքում օգտակար լինելն է, բայց դժբաղդաբար քահանաները սովոր չեն այս ուղղութեամբ գործելու։—Ճիշտ այնպէս, ինչպէս մեր՝ հայերիս մէջ է։